

## ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Հայաստանի աշխարհագրական դիրքը, տարածքը, պատմական հարևանները:
2. Հայկական լեռնաշխարհն իբրև մարդկային հասարակության հնագույն բնօրրաններից մեկը:
3. Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը: Ցեղային ու վաղպետական միավորումները: Հայ ժողովրդի կազմավորման շուրջ գոյություն ունեցող տեսակետները:
4. Պետականության ծագումը Հայկական լեռնաշխարհում: Վանի թագավորության /Ուրարտու/ հիմնահարցը:
5. Համահայկական միասնական պետության կազմավորումը: Երվանդունիների թագավորությունը մ.թ.ա. 6-3-րդ դարերում:
6. Հայկական լեռնաշխարհի վաղնջական մշակույթը /հնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. 3-րդ դարը/:
7. Հայկական միասնական կենտրոնացված պետության առաջացումը: Հայաստանի էթնոքաղաքական և տնտեսական վերելքը առաջին Արտաշեսյանների օրոք:
8. Հայկական աշխարհակալ տերությունը: Տիգրան Մեծի տերության տեղն ու դերը Մերձավոր Արևելքի ռազմա-քաղաքական համակարգում:
9. Հայաստանի պայքարը Հռոմի ծավալապաշտական քաղաքականության դեմ: Մ.թ.ա. 66թ. Արտաշատի պայմանագրի նշանակությունը:
10. Հայաստանն Արևմուտք-Արևելքի հակամարտության կիզակետում: Արտավազդ 2-րդի քաղաքականությունը:
11. Հայաստանը վերջին Արտաշեսյանների օրոք: Արտաշեսյան թագավորության անկումը: Արտաշեսյանների թագավորության տեղը հայոց պատմության մեջ:
12. Հռոմեա-պարթևական հակամարտությունները մ.թ. 1-ին դարի կեսերին և Հայաստանը: Արշակունիների թագավորության հաստատումը Հայաստանում:
13. Արշակունիների ջանքերը Հայաստանում ժառանգական իշխանություն հաստատելու ուղղությամբ /2-3-րդ դարեր/: Սասանյան հեղաշրջումը Պարսկաստանում և Հայաստանը:
14. Հայկական մշակույթը հելլենիստական դարաշրջանում:
15. Քրիստոնեության հռչակումը պետական կրոն: Նրա տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
16. Տրդատ 3-րդ Մեծի ներքին և արտաքին քաղաքականությունը: Քրիստոնեության ամրապնդումը Հայաստանում:
17. Հայաստանը Խոսրով 3-րդ Կոտակի և Տիրան Արշակունու օրոք: Պայքար թագավորական իշխանության ամրապնդման համար:
18. Արշակ 2-րդի պայքարը կենտրոնացված ուժեղ պետության հաստատման և Հայաստանի քաղաքական անկախության պահպանման համար: Նրա քաղաքականության ձախողման պատճառները:
19. Պապ Արշակունու գործունեության բնութագիրը: Նրա փորձը քրիստոնեական եկեղեցին ազգայնացնելու ուղղությամբ:
20. Արշակունիների թագավորության անկումը. պատճառներն ու դասերը:
21. Հայաստանի կացությունը 5-րդ դարի սկզբներին: Հայկական մարզպանությունը: Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները:
22. Վարդանանց պատերազմը. պատմական նշանակությունը:

23. Վահանանց պատերազմը: Ազատագրական պայքարի ընթացքը: Նվարսակի հաշտության պայմանագրի նշանակությունը:
24. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը ներքին ինքնուրույնության համար 6-րդ դարում: Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում:
25. Մեսրոպ Մաշտոցը և հայոց գրերի ստեղծումը: Գրերի ստեղծման պատմական նշանակությունը:
26. Վաղ միջնադարյան մշակույթը Հայաստանում /4-9-րդ դդ./:
27. Արաբական արշավանքները Հայաստան: Քաղաքական նոր դիրքորոշումը և 652թ. հայ-արաբական պայմանագիրը:
28. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ 8-րդ դարում:
29. 850-855թթ. հակաարաբական ապստամբությունը Հայաստանում: Ապստամբության պատմական նշանակությունը:
30. Աղանդավորական շարժումները Հայաստանում 5-9-րդ դարերում:
31. Հայկական պետականության վերականգնումը 9-րդ դարի վերջերին: Աշոտ 1-ինի և Սմբատ 1-ինի դերը:
32. Աշոտ 2-րդ Երկաթի պայքարը պետության ամրապնդման ուղղությամբ: Արաբների վերջնական վտարումը Հայաստանից:
33. Հայոց պետականության զարգացման ընթացքը 10-րդ դարի 2-րդ կեսին և 11-րդ դարի սկզբներին: Երկրի միավորման փորձերը և դրա ձախողման պատճառները:
34. Բագրատունյաց թագավորության անկումը:
35. Քաղաքական մասնատվածությունը Հայաստանում 10-11-րդ դարերում:
36. Աղանդավորական և գյուղացիական շարժումները Հայաստանում 9-11-րդ դդ.:
37. Բագրատունյաց Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը:
38. Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքը:
39. Մելչուկ-թուրքերի արշավանքները և նրանց հաստատվելը Հայաստանում և Բյուզանդիայում:
40. Հայաստան-Վրաստան փոխհարաբերությունները 12-13-րդ դդ.: Հյուսիս-արևելյան Հայաստանի ազատագրումը և Ջաքարյանների իշխանապետությունը:
41. Կիլիկիայի հայկական իշխանությունը և հայ-խաչակրաց հարաբերությունները:
42. Թագավորության հռչակումը Կիլիկիայում: Լևոն 2-րդ:
43. Կիլիկիայի հայկական թագավորությունը Հեթոմյանների օրոք: Կիլիկիայի հայկական թագավորության անկումը և դրա պատճառները:
44. Հայկական մշակույթը 9-14-րդ դարերում. Վերածննդի տարրերը հայկական մշակույթի մեջ:
45. Մոնղոլ-թաթարների գերիշխանության հաստատումը Հայաստանում: Երկրի հետագա անկումը:
46. Հայաստանը Սևեթյան Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի հակամարտությունների ոլորտում:
47. Հայերի ազատագրական շարժման նախափորձերը 15-16-րդ դարերում:
48. Հայկական մշակույթը 15-17-րդ դարերում:
49. Հայ ազատագրական շարժումները 17-րդ դարի երկրորդ կեսին և 18-րդ դարի սկզբներին: Իսրայել Օրի:
50. Հայ ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում 18-րդ դարի 20-ական թվականներին:
51. Հովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը:
52. Հայաստանի ազատագրության Մադրասի խմբակի ծրագիրը:

53. Հայաստանի ազատագրության ծրագրերը 18-րդ դարի վերջերին: Ռուսաստանը և հայ ազատագրական շարժումը:
54. Հայաստանի կացությունը 19-րդ դարի սկզբներին: Տերությունների պայքարը Անդրկովկասի համար:
55. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Ռուսաստանը հայ ժողովրդի պատմական ճակատագրում:
56. 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը:
57. Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում 1830-1860-ական թվականներին:
58. Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի 30-60-ական թվականներին: Սահմանադրական շարժումը, արդյունքներն ու նշանակությունը:
59. Ջեյթունի 1862թ. ապստամբությունը և նրա նշանակությունը:
60. Հայկական մշակույթը 18-րդ դարում և 19-րդ դարի առաջին կեսին:
61. 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմը. հայկական հարցի միջազգայնացումը: Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը:
62. Հայ ազգային-ազատագրական շարժումները 19-րդ դարի 70-80-ական թթ.:
63. Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը:
64. 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարը. պայքարի ձևերը: Ազատագրական պայքարի զինված փուլի սկզբնավորումը:
65. Արևմտահայերի ցեղասպանության թուրքական ծրագրի կենսագործման սկիզբը: Հայկական կոտորածները 1894-1896 թվականներին:
66. Տերությունները և հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թվականներին:
67. Հայաստանը 20-րդ դարի սկզբներին: 1903թ. հունիսի 12-ի օրենքը: Ազգային-ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում: 1904թ. Սասունի ապստամբությունը:
68. Հայաստանը 1905-1907թթ. ռուսական առաջին հեղափոխության ժամանակաշրջանում: Հայ-թաթարական ընդհարումները:
69. Արևմտյան Հայաստանը 1905-1914թթ.: Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին:
70. Հայաստանը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Պատերազմի Կովկասյան ճակատը և հայերը: Կամավորական շարժումը. դերն ու նշանակությունը:
71. Արևմտահայության Մեծ Եղեռնը: Հայոց ցեղասպանության պատճառներն ու դասերը:
72. Ինքնապաշտպանական մարտերը 1915թ.:
73. Հայաստանը փետրվարյան հեղափոխությունից հետո: Ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը: Հայոց Ազգային խորհրդի ձևավորումը:
74. Հայկական մշակույթը 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբին:
75. Հայաստանը 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանում:
76. Թուրքական ներխուժումը Անդրկովկաս 1918թ.: Տրապիզոնի բանակցությունները և Բաթումի պայմանագիրը:
77. 1918թ. Մայիսյան հերոսամարտերը: Հայաստանի Հանրապետության հռչակումը:
78. Հայաստանի Հանրապետության /1918-1920թթ./ կազմավորումը: Պետական կառուցվածքը:
79. Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը /1918-1920թթ./:
80. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը /1918-1920թթ./:
81. Հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Մերի պայմանագիրը:
82. 1920թ. հայ-թուրքական պատերազմը: Հայաստանի Հանրապետության անկման պատճառները:

83. Հայաստանի խորհրդայնացումը: Դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը:
84. Հայկական հարցը 1921թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերում:
85. 1921թ. փետրվարյան ապստամբությունը. պատճառները, հետևանքները:
86. Չանգեզուրի գոյամարտը 1918-1921թթ.: Գարեգին Նժդեհ:
87. Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921թվականին, Չանգեզուրի խորհրդայնացումը:
88. Արցախի հիմնահարցը 1918-1921թթ.: Արցախի բռնակցումը Ադրբեջանին:
89. Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ կազմավորումը: Հայաստանը ԽՍՀՄ համակարգում:
90. Ինդուստրացման քաղաքականության իրականացումը Հայաստանում. արդյունքները:
91. Գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականությունը Հայաստանում:
92. Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը 1920-1940 թվականներին: Քաղաքական բռնաճնշումները:
93. Խորհրդային Հայաստանի մշակութային կյանքը 1920-1940թվականներին:
94. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին:
95. Խորհրդային Հայաստանի տնտեսությունը 1946-1990թթ.:
96. Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը 1946-1990թթ.:
97. Արցախյան շարժման նոր փուլը /1988-1990-ական թվականներ/: ԼՂՀ-ի հռչակումը:
98. Հայաստանի անկախության հռչակումը /1991թ. սեպտեմբերի 21/:
99. Հայկական սփյուռքը /1920-2018 թթ./: Հայրենիք-սփյուռք հարաբերություններն արդի փուլում:
100. Հայկական մշակույթը 1946-2018 թվականներին:

Հաստատված է հայոց պատմության ամբիոնի  
2019 թ. նոյեմբերի 4-ի նիստում /արձանագրություն թիվ 4/:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

ՊՐՈՖ. Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

04. 11. 2019 թ.